

23.10. 2001թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Գևորգյան, Վ. Դավթյան,
Վ. Դանիելյան, Յու. Պողոսյան, Ա. Աղազարյան (*Խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Ա. Շաբոյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ*), Ն. Մուշեղյան (*Անփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկետինգի բաժնի պետ*), Գ. Թորոսյան (*Տրանսպորտի և կապի ծառայությունների բաժնի պետ*), Լ. Պետրոսյան (*Շինարարության բաժնի պետ*), Հ. Հակոբյան (*Առևտրի և այլ ծառայությունների բաժնի պետ*), Կ. Կույումջյան (*Մարդահամարի վարչության պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում՝ տասնհինգ հարց.

1. «Ցուցումներ հսկիչ թերթերի (Ձև 4) տեսակավորման և ստացման վերաբերյալ» փաստաթուղթը հաստատելու մասին.

/Ձեկուցող Գ. Գևորգյան, Կ. Կույումջյան/

2. «Ցուցումներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի վարչության կողմից ՀՀ 2001 թվականի մարդահամարի նյութերի ընդունման գործընթացը կանոնակարգելու մասին» փաստաթուղթը հաստատելու մասին.

/Ձեկուցող Գ. Գևորգյան, Կ. Կույումջյան/

3. Ցուցումներ վերահսկիչ փաստաթղթերի (Ձև 6) տեսակավորման և ստուգման վերաբերյալ փաստաթուղթը հաստատելու մասին.

/Ձեկուցող Գ. Գևորգյան, Կ. Կույումջյան/

4. «Բնակչության կարծիքը հանրապետության էկոլոգիական վիճակի վերաբերյալ» հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան/

5. «Բնակչության կարծիքը զանգվածային լրատվության միջոցների վերաբերյալ /մամուլ, ռադիո, հեռուստատեսություն/» հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան/

6. «Հանրապետությունում վնասվածության 3-րդ և 4-րդ աստիճանի (վթարային, խարխուլ) շենքերի և առանձնատների միանվագ հաշվառում» հետազոտության հարցաթերթը և համապատասխան սահմանումները հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան/

7. «Վիճակագրական տեղեկատվություն սպառողի և վիճակագրական տեղեկատվություն տրամադրողի կարծիքը վիճակագրական տեղեկատվության վերաբերյալ» հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան, հրավիրել Ն. Մուշեղյանին/

8. «Երևան քաղաքում և ՀՀ մարզերում ուղևորափոխադրումներ իրականացնող անհատ ձեռնարկատերեր» հետազոտության հարցաթերթը և լրացնելու կարգի մասին Հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Գ. Թորոսյան/

9. «Կապի ծառայություններից ստացված եկամուտների մասին» /եռամսյակային/ հաշվետվության մեջ /ձև 13-կապ/ փոփոխություն կատարելու մասին.

/Չեկուցող՝ Գ. Թորոսյան/

10. «Ամառանոցային տներ» հետազոտությունը 2002թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իրականացնելուն հավանություն տալու մասին.

/Չեկուցող՝ Լ. Պետրոսյան/

11. «Անհատական բնակարանային շինարարություն» հետազոտության հարցաթերթը և լրացնելու մասին Հրահանգը հաստատելու մասին.

/Չեկուցող՝ Լ. Պետրոսյան/

12. «Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում գյուղատնտեսական ապրանքների և անասունների վաճառք» հետազոտության հարցաթերթը և լրացնելու կարգի մասին Հրահանգը հաստատելու մասին.

/Չեկուցող՝ Հ. Հակոբյան/

13. «Սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող մանրածախ առևտուր» հետազոտության հարցաթերթը և լրացման կարգի մասին Հրահանգը հաստատելու մասին.

/Չեկուցող՝ Հ. Հակոբյան/

14. «Հանրային սննդի օբյեկտների միջոցով իրականացվող մանրածախ առևտուր» հետազոտության հարցաթերթը և լրացման կարգի մասին Հրահանգը հաստատելու մասին.

/Չեկուցող՝ Հ. Հակոբյան/

15. Այլ հարցեր

15.1 ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի 26.08.1999թ. թիվ 160 հրամանն ուժը կորցրած ճանաչելու, «Ավտոտրանսպորտի շահագործական շարժակազմի առկայությունը և աշխատանքը» ձև թիվ 1-ավտո (շտապ-ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին.

/Չեկուցող՝ Գ. Թորոսյան/

15.2 ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի 26.08.1999թ. թիվ 160 հրամանն ուժը կորցրած ճանաչելու, «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի մասին» ձև 65-ավտո (փոստային-եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին.

/Չեկուցող՝ Գ. Թորոսյան/

15.3 ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի 26.08.1999թ. թիվ 160 հրամանն ուժը կորցրած ճանաչելու, «Ավտոտրանսպորտի առկայությունը, միջոցների օգտագործումը և գործունեությունը» ձև թիվ 3-ավտո (փոստային- տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին.

/Չեկուցող՝ Գ. Թորոսյան/

15.4 ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 20.11.2000թ. թիվ 26 որոշումն ուժը կորցրած ճանաչելու, «Հաշվետվություն ավտոտրանսպորտի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարության մասին» ձև թիվ 1-տր (տրանսպորտ) փոստային տարեկան պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման մասին Հրահանգը հաստատելու մասին:

/Չեկուցող՝ Գ. Թորոսյան/

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը քվեարկությամբ հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Ցուցումներ հսկիչ թերթերի (Ձև 4) տեսակավորման և ստացման վերաբերյալ» փաստաթուղթը հաստատելու մասին.

/Ձեկուցող Գ. Գևորգյան, Կ. Կույումջյան/

Նշվեց, որ ՀՀ 2001թ. մարդահամարի անցկացման հետ կապված գործընթացներում խիստ կարևորվում են հսկիչ թերթերի (ձև 4) տեսակավորման և ստուգման աշխատանքները, քանի որ հսկիչ թերթերի կիրառումը մարդահամարի հաշվառման ընթացքում նպատակաուղղված է ապահովելու առկա բնակչության թվաքանակի հաշվառման ամբողջականությունը (բացթողումներից խուսափելու համար) :

Որոշեցին՝ հաստատել «Ցուցումներ հսկիչ թերթերի (Ձև 4) տեսակավորման և ստացման վերաբերյալ» փաստաթուղթը.

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «Ցուցումներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի վարչության կողմից ՀՀ 2001 թվականի մարդահամարի նյութերի ընդունման գործընթացը կանոնակարգելու մասին» փաստաթուղթը հաստատելու մասին.

/Ձեկուցող Գ. Գևորգյան, Կ. Կույումջյան/

Նշվեց, որ վերոնշյալ փաստաթուղթը ներառում է ցուցումներ Մարդահամարի վարչության կողմից ՀՀ 2001թ. մարդահամարի նյութերի ընդունման գործընթացը փուլերով և սահմանված ժամկետներում ընդունելու գործընթացի վերաբերյալ:

Որոշեցին՝ հաստատել «Ցուցումներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի վարչության կողմից ՀՀ 2001 թվականի մարդահամարի նյութերի ընդունման գործընթացը կանոնակարգելու մասին» փաստաթուղթը

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. «Ցուցումներ վերահսկիչ փաստաթղթերի (Ձև 6) տեսակավորման և ստուգման վերաբերյալ» փաստաթուղթը հաստատելու մասին.

/Ձեկուցող Գ. Գևորգյան, Կ. Կույումջյան/

Նշվեց, որ ՀՀ 2001թ. մարդահամարի անցկացման հետ կապված գործընթացներում կարևորվում են վերահսկիչ փաստաթղթերի (ձև 6) տեսակավորման և ստուգման աշխատանքները, քանի որ վերահսկիչ փաստաթղթերի կիրառումը մարդահամարի հաշվառման ընթացքում նպատակաուղղված է ստուգելու մեկից ավել կացարան՝ բնակարան, տուն, առանձնատուն ունեցող անձանց հաշվառման ճշգրտությունը:

Որոշեցին՝ հաստատել «Ցուցումներ վերահսկիչ փաստաթղթերի (Ձև 6) տեսակավորման և ստուգման վերաբերյալ» փաստաթուղթը:

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. «Բնակչության կարծիքը հանրապետության էկոլոգիական վիճակի վերաբերյալ» հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան/

Նշվեց, որ հետազոտությունը նպատակ է հետապնդում պարզելու հանրապետության բնակչության էկոլոգիական իմացության աստիճանը, էկոլոգիական դաստիարակության մակարդակը, էկոլոգիական վիճակի գնահատման կարողությունը, տարբեր կրթական

մակարդակի և ուղղությունների էկոլոգների պատրաստման և օգտագործման վիճակը: Հետազոտության արդյունքներն օգտագործվելու են միայն վերլուծական և ծրագրային աշխատանքներում ամփոփ տեսքով:

Ներկայացվեցին խմբագրական բնույթի դիտողություններ և առաջարկություններ:

Որոշեցին՝

1. հաստատել «Բնակչության կարծիքը հանրապետության էկոլոգիական վիճակի վերաբերյալ» հետազոտության հարցաթերթը.
/Զվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. «Բնակչության կարծիքը զանգվածային լրատվության միջոցների վերաբերյալ /մամուլ, ռադիո, հեռուստատեսություն/» հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին.
/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

Նշվեց, որ հետազոտության նպատակն է պարզել հանրապետության բնակչության վերաբերմունքը ՀՀ զանգվածային լրատվության միջոցների գործունեության նկատմամբ և գնահատականը: Հետազոտությունն ընդգրկելու հանրապետության բոլոր մարզերը, իսկ արդյունքներն օգտագործվելու են վերլուծական և ծրագրային աշխատանքներում ամփոփ տեսքով:

Դիտողություններ և առաջարկություններ.

Վ. Դանիելյան – հարցաթերթի որոշ հարցեր իրենց մեջ քաղաքական ենթատեքստ են պարունակում.

Գ. Անանյան - հարցաթերթի 19-20 հարցերը ենթադրում են անվանական տեղեկատվության ստացում և հրապարակում, ինչը հակասում է «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին.

Ս. Մնացականյան (առաջ.) – լրամշակել հարցաթերթը՝ հստակ տարանջատելով քաղաքականության և գիտության սահմանները, հարցերը ձևակերպել վիճակագրության տեսանկյունից.
- բոլոր դիտողությունները և առաջարկությունը ընդունվեցին:

Որոշեցին՝

1. հաստատել «Բնակչության կարծիքը զանգվածային լրատվության միջոցների վերաբերյալ /մամուլ, ռադիո, հեռուստատեսություն/» հետազոտության հարցաթերթի բոլոր դիտողություններով և առաջարկություններով լրամշակված տարբերակը:
/Զվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. «Հանրապետությունում վնասվածության 3-րդ և 4-րդ աստիճանի (վթարային, խարխուլ) շենքերի և առանձնատների միանվագ հաշվառում» հետազոտության հարցաթերթը և համապատասխան սահմանումները հաստատելու մասին.
/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

Հետազոտության նպատակը, ըստ զեկուցողի, հանրապետությունում առկա, վնասվածության բարձր աստճաններ ունեցող, բնակարանների և բնակելի տների քանակի և տարածքային բաշխվածության որոշումն է:

Դիտողություններ և առաջարկություններ.

Ս. Մնացականյան (առաջ.) – ֆորմալ առումով հարցաթերթին տալ պետական վիճակագրական հաշվետվության ձևի տեսք և ներկայացնել պետական գրանցման.

Որոշեցին՝

1. հաստատել «Հանրապետությունում վնասվածության 3-րդ և 4-րդ աստիճանի (վթարային, խարխուլ) շենքերի և առանձնատների միանվագ հաշվառում» հետազոտության հարցաթերթի ըստ ներկայացված առաջարկության լրամշակված տարբերակը:

/Զվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

7. «Վիճակագրական տեղեկատվություն սպառողի և վիճակագրական տեղեկատվություն հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան, հրավիրել Ն. Մուշեղյանին/

Նշվեց, որ հետազոտության նպատակն է պարզել վիճակագրության բոլոր կարգի սպառողների և վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների վերաբերմունքը վիճակագրական տեղեկատվության հավաքագրման գործընթացի, արժանահավատության, օպերատիվության, հրապարակումների, մատչելիության և դրանց առնչվող մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Հարցումներն անց են կացվելու Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում:

Որոշեցին՝

1. հաստատել «Վիճակագրական տեղեկատվություն սպառողի և վիճակագրական տեղեկատվություն տրամադրողի կարծիքը վիճակագրական տեղեկատվության վերաբերյալ» հետազոտության հարցաթերթը:

/Զվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

8. «Երևան քաղաքում և ՀՀ մարզերում ուղևորափոխադրումներ իրականացնող անհատ ձեռնարկատերեր» հետազոտության հարցաթերթը և լրացնելու կարգի մասին հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Գ. Թորոսյան/

Նշվեց, որ հետազոտության իրականացմամբ նպատակ է հետապնդվում ճշգրտելու ուղևորափոխադրումների, ուղևորաշրջանառության և մեքենաների կատարած վազքի ցուցանիշները:

Որոշեցին՝

1. հաստատել «Երևան քաղաքում և ՀՀ մարզերում ուղևորափոխադրումներ իրականացնող անհատ ձեռնարկատերեր» հետազոտության հարցաթերթը և լրացնելու կարգի մասին Հրահանգը:

/Զվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

9. «Կապի ծառայություններից ստացված եկամուտների մասին» /եռամսյակային/ հաշվետվության մեջ /ձև 13-կապ/ փոփոխություն կատարելու մասին.

/Զեկուցող՝ Գ. Թորոսյան/

Նշվեց, որ գործունեության այս կամ այն տեսակը դասակարգելիս կիրառվում է խոշորացված մոտեցում, որի արդյունքում նշված տողերը կարող են հասկացվել որպես նույն ցուցանիշներ, ուստի առաջարկվում է կատարել ներկայացվող փոփոխությունը:

Գիտողություններ և առաջարկություններ.

Ս. Մնացականյան (առաջ.) – 2.3.1 կետում հարկ է «եկամուտները» բառից հետո կատարել լրացում հետևյալ տեսքով և բովանդակությամբ՝ (հասույթ առանց անուղղակի հարկերի)։

Որոշեցին՝

«Կապի ծառայություններից ստացված եկամուտների մասին» /եռամսյակային/ հաշվետվության մեջ /ձև 13-կապ/ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը։

1. հաշվետվության 110 տողի «Կապի ծառայություններից ստացված եկամուտները-ընդամենը, հազ. դրամ» ցուցանիշը փոխարինել «Եկամուտներ-ընդամենը, հազ. դրամ» ցուցանիշով։

2. հաշվետվությունը լրացնելու կարգի մասին Հրահանգի 2.3.1 կետում «ընդհանուր եկամուտները» բառերից հետո կատարել լրացում հետևյալ տեսքով և բովանդակությամբ՝ (հասույթ առանց անուղղակի հարկերի)։

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

10. «Ամառանոցային տներ» հետազոտությունը 2002թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իրականացնելուն հավանություն տալու մասին.

/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Նշվեց, որ, ըստ պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի, հետազոտությունը նախատեսված էր անցկացնել ս.թ. սեպտեմբեր ամսին, սակայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գնումների գործակալության կողմից մրցույթ չիրականացնելու պատճառով չիրականացվեց նաև հետազոտությունը, որով էլ պայմանավորված խնդրվում է ՀՀ ՎՊԽ հավանությունը հետազոտությունը 2002թ. օգոստոս – սեպտեմբեր ամիսներին իրականացնելու համար։

Հաշվի առնելով 2002թ. նշված հետազոտության իրականացման ֆինանսավորման անհնարինությունը.

Որոշեցին՝

1. «Ամառանոցային տներ» հետազոտության 2001թ. իրականացումը համարել ոչ նպատակահարմար.

2. հանձնարարել՝

Ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկետինգի բաժնին՝ պետական վիճակագրական աշխատանքների 2001թ. տարեկան ծրագրի կատարման հաշվետվության մեջ արձանագրել վերոնշյալ հետազոտության չիրականացման փաստը համապատասխան հիմնավորմամբ։

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

11. «Անհատական բնակարանային շինարարություն» հետազոտության հարցաթերթը և լրացնելու մասին Հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Նշվեց, որ հետազոտության նպատակն է բացահայտել շահագործման հանձնված կամ կառուցման փուլում գտնվող բնակելի շենքերի քանակը, մակերեսը և այլն, որի արդյունքում ակնկալվում է ստանալ անհատական բնակարանային շինարարության վերաբերյալ արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն։

Դիտողություններ և առաջարկություններ

Ս. Մնացականյան (առաջ.) – հարցաթերթից հանել երրորդ պարբերությունը

- 2-րդ կետում կատարել լրացում ավելացնելով բնակելի շենքի հասցեի մասին նոր տող

- 3-րդ կետում «չորս հարկանի» տողում կատարել լրացում «չորս» բառից հետո ավելացնելով «և ավելի» արտահայտությունը
- առաջարկություններն ընդունվեցին:

Որոշեցին՝

1. հաստատել «Անհատական բնակարանային շինարարություն» հետազոտության հարցաթերթը և լրացնելու մասին Հրահանգը:

/Զվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

12. «Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում գյուղատնտեսական ապրանքների և անասունների վաճառք» հետազոտության հարցաթերթը և լրացնելու կարգի մասին Հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Հ. Հակոբյան/

Նշվեց, որ հետազոտությունը հնարավորություն կտա ստանալ տեղեկատվություն ՀՀ գործող գյուղատնտեսական արտադրանքի շուկաների քանակի, դրանց զբաղեցրած տարածքի և առևտրական մակերեսի, դրանցում առկա և փաստացի գործող վաճառատեղերի քանակի, ինչպես նաև վաճառվող ապրանքատեսակների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ:

Գիտողություններ և առաջարկություններ.

Ս. Մնացականյան – հարցաթերթից հանել երրորդ պարբերությունը,

- հարցաթերթի բոլոր այն տողերի դիմաց, որոնք առնչվում են վարչական տեղեկատվություն ստանալուն աստղանիշով հղում կատարել առ այն, որ դրանք լրացվում են Առևտրի և այլ ծառայությունների բաժնի կողմից,

- հարցաթերթին կցել լրացման կարգի մասին Հրահանգ

-Ֆորմալ առումով հարցաթերթը համապատասխանեցնել հետազոտության նպատակին և բովանդակությանը

- առաջարկություններն ընդունվեցին.

Որոշեցին՝

1. հաստատել «Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում գյուղատնտեսական ապրանքների և անասունների վաճառք» հետազոտության հարցաթերթի և լրացման կարգի մասին Հրահանգի բոլոր առաջարկություններով և դիտողություններով լրամշակված տարբերակը:

/Զվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

13. «Սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող մանրածախ առևտուր» հետազոտության հարցաթերթը և լրացման կարգի մասին Հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Հ. Հակոբյան/

Նշվեց, որ որ հետազոտությունը հնարավորություն կտա ստանալ տեղեկատվություն ՀՀ գործող սպառողական ապրանքների շուկաների քանակի, դրանց զբաղեցրած տարածքի և առևտրական մակերեսի, դրանցում առկա և փաստացի գործող վաճառատեղերի քանակի, ինչպես նաև վաճառվող ապրանքատեսակների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ:

Գիտողություններ և առաջարկություններ.

Ս. Մնացականյան – հարցաթերթից հանել երրորդ պարբերությունը,

- հարցաթերթի բոլոր այն տողերի դիմաց, որոնք առնչվում են վարչական տեղեկատվություն ստանալուն աստղանիշով հղում կատարել առ այն, որ դրանք լրացվում են Առևտրի և այլ ծառայությունների բաժնի կողմից,
- հարցաթերթին կցել լրացման կարգի մասին Հրահանգ
- Ֆորմալ առումով հարցաթերթը համապատասխանեցնել հետազոտության նպատակին և բովանդակությանը
- առաջարկություններն ընդունվեցին:

Որոշեցին՝

1. հաստատել «Սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող մանրածախ առևտուր» հետազոտության հարցաթերթի և լրացման կարգի մասին Հրահանգի բոլոր առաջարկություններով և դիտողություններով լրամշակված տարբերակը:
/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

14. «Հանրային սննդի օբյեկտների միջոցով իրականացվող մանրածախ առևտուր» հետազոտության հարցաթերթը և լրացման կարգի մասին Հրահանգը հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Հ. Հակոբյան/

Նշվեց, որ հետազոտությունը հնարավորություն կտա ստանալ ճշգրիտ տեղեկատվություն ՀՀ գործող հանրային սննդի օբյեկտների քանակի, դրանց զբաղեցրած առևտրական մակերեսի, աշխատողների թվաքանակի, նստատեղերի քանակի, ինչպես նաև ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ:

Դիտողություններ և առաջարկություններ.

Ս. Մնացականյան – հարցաթերթից հանել երրորդ պարբերությունը,

- հարցաթերթի բոլոր այն տողերի դիմաց, որոնք առնչվում են վարչական տեղեկատվություն ստանալուն աստղանիշով հղում կատարել առ այն, որ դրանք լրացվում են Առևտրի և այլ ծառայությունների բաժնի կողմից,
- հարցաթերթին կցել լրացման կարգի մասին Հրահանգ
- Ֆորմալ առումով հարցաթերթը համապատասխանեցնել հետազոտության նպատակին և բովանդակությանը
- առաջարկություններն ընդունվեցին:

Որոշեցին՝

1. հաստատել «Հանրային սննդի օբյեկտների միջոցով իրականացվող մանրածախ առևտուր» հետազոտության հարցաթերթի և լրացման կարգի մասին Հրահանգի բոլոր առաջարկություններով և դիտողություններով լրամշակված տարբերակը:
/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

15. Այլ հարցեր

15.1 ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի 26.08.1999թ. թիվ 160 հրամանն ուժը կորցրած ճանաչելու, «Ավտոտրանսպորտի շահագործական շարժակազմի առկայությունը և աշխատանքը» ձև թիվ 1-ավտո (շտապ-ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Գ. Թորոսյան/

Նշվեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը 2001թ. օգոստոսի 16-ի թիվ 762 «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կազմը հաստատելու մասին» որոշմամբ փոփոխել է ՀՀ-ում իրականացվող երթուղիների տեսակները, անհրաժեշտություն է առաջացել նմանատիպ փոփոխություններ կատարել նաև ներկայացված պետական վիճակագրական հաշվետվության ձևում և դրա լրացման մասին Հրահանգում:

Հաշվի առնելով առաջարկվող փոփոխությունների և լրացումների ծավալի մեծությունը.

Որոշեցին՝

1. հաստատել «Ավտոտրանսպորտի շահագործական շարժակազմի առկայությունը և աշխատանքը» ձև թիվ 1-ավտո (շտապ-ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման Հրահանգը.

2. ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի 26.08.1999թ. թիվ 160 հրամանը
/Զվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

15.2 ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի 26.08.1999թ. թիվ 160 հրամանն ուժը կորցրած ճանաչելու, «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի մասին» ձև 65-ավտո (փոստային-եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Գ. Թորոսյան/

Նշվեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը 2001թ. օգոստոսի 16-ի թիվ 762 «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կազմը հաստատելու մասին» որոշմամբ փոփոխել է ՀՀ-ում իրականացվող երթուղիների տեսակները, անհրաժեշտություն է առաջացել նմանատիպ փոփոխություններ կատարել նաև ներկայացված պետական վիճակագրական հաշվետվության ձևում և դրա լրացման մասին Հրահանգում:

Հաշվի առնելով առաջարկվող փոփոխությունների և լրացումների ծավալի մեծությունը.

Որոշեցին՝

1. հաստատել «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի մասին» ձև 65-ավտո (փոստային-եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման Հրահանգը.

2. ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի 26.08.1999թ. թիվ 160 հրամանը:
/Զվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

15.3 ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի 26.08.1999թ. թիվ 160 հրամանն ուժը կորցրած ճանաչելու, «Ավտոտրանսպորտի առկայությունը, միջոցների օգտագործումը և գործունեությունը» ձև թիվ 3-ավտո (փոստային- տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Գ. Թորոսյան/

Նշվեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը 2001թ. օգոստոսի 16-ի թիվ 762 «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային

տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կազմը հաստատելու մասին» որոշմամբ փոփոխել է ՀՀ-ում իրականացվող երթուղիների տեսակները, անհրաժեշտություն է առաջացել նմանատիպ փոփոխություններ կատարել նաև ներկայացված պետական վիճակագրական հաշվետվության ձևում և դրա լրացման մասին Հրահանգում:

Հաշվի առնելով առաջարկվող փոփոխությունների և լրացումների ծավալի մեծությունը.

Որոշեցին՝

1. հաստատել «Ավտոտրանսպորտի առկայությունը, միջոցների օգտագործումը և գործունեությունը» ձև թիվ 3-ավտո (փոստային- տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման Հրահանգը.

2. ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի 26.08.1999թ. թիվ 160 հրամանը:

/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ/

15.4 ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 20.11.2000թ. թիվ 26 որոշումն ուժը կորցրած ճանաչելու, «Հաշվետվություն ավտոտրանսպորտի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարության մասին» ձև թիվ 1-տր (տրանսպորտ) փոստային տարեկան պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման մասին Հրահանգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Թորոսյան/

Նշվեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը 2001թ. օգոստոսի 16-ի թիվ 762 «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կազմը հաստատելու մասին» որոշմամբ փոփոխել է ՀՀ-ում իրականացվող երթուղիների տեսակները, անհրաժեշտություն է առաջացել նմանատիպ փոփոխություններ կատարել նաև ներկայացված պետական վիճակագրական հաշվետվության ձևում և դրա լրացման մասին Հրահանգում:

Հաշվի առնելով առաջարկվող փոփոխությունների և լրացումների ծավալի մեծությունը.

Որոշեցին՝

1. հաստատել «Հաշվետվություն ավտոտրանսպորտի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարության մասին» ձև թիվ 1-տր (տրանսպորտ) փոստային տարեկան պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման մասին Հրահանգը.

2. ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 20.11.2000թ. թիվ 26 որոշումը:

/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան